

Արձանագրություն

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2012թ. մայիսի 31-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 68-ը (վաթսունութ):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Ֆակուլտետային կանոնադրությունների հաստատում: (Ձեկ.՝ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան)
2. ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին (Ձեկ.՝ ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյան)
3. ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին (Ձեկ.՝ ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյան)
4. Կրեդիտային համակարգի ներդրումը հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայում: Խնդիրներ և լուծումներ: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)
5. ԵՊՀ գրադարանային ֆոնդի առկայության և օգտագործման վերաբերյալ հաղորդում: (Ձեկ.՝ գրադարանի տնօրեն Ե. Ս. Միրզոյան)
Ընթացիկ հարցեր
6. Ըստ 1-ին հայտի ԵՊՀ դիմորդների շարժի մասին (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան):

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Գիտխորհրդի անդամները **լսեցին** ԵՊՀ ֆակուլտետային կանոնադրությունների հաստատման մասին: (Ձեկ.՝ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան):

Մ. Սողոմոնյանը տեղեկացրեց, որ 4 ֆակուլտետների (ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ֆիզիկայի, արևելագիտության և սոցիոլոգիայի) կանոնադրությունները դեռևս հաստատված չեն ԵՊՀ գիտխորհրդի կողմից: Արևելագիտության ֆակուլտետի կանոնադրությունը քննարկվել է ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովում, և հաշվի առնելով, որ այդ ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդի՝ ամբիոններից առաջադրվող ընտրովի

անդամների համամասնությունը կանոնադրության մեջ կոնկրետ թվերով է ներկայացված, ամբիոնների հաստիքակազմի փոփոխության դեպքում կանոնադրությունը փոխելու անհրաժեշտություն չառաջացնելու համար հանձնաժողովը կանոնադրությունը ետ է ուղարկել ֆակուլտետ: Սոցիոլոգիայի ֆակուլտետի կանոնադրությունը դեռևս չի ընդունվել ֆակուլտետի խորհրդում: Հանձնաժողովը քննարկել է ԻԿՄ և ֆիզիկայի ֆակուլտետների կանոնադրությունները և միջնորդում է ԵՊՀ գիտական խորհրդի առջև՝ հաստատելու դրանք:

Արտահայտվեցին.- Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Լ. Վարդանյանը:

Որոշեցին.-

1. Հաստատել ԵՊՀ ինֆորմատիկայի և կիսառական մաթեմատիկայի, ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետների կանոնադրությունները:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2. **Լսեցին.**- ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին (Ձեկ.՝ ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյան):

Գ. Ղազինյանը ներկայացրեց հիմնական այն փոփոխությունները, որոնք տեղ են գտել նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծում:

Արտահայտվեցին. – Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ.Լ. Սարգսյանը, սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Ե. Մկրտիչյանը, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Ա. Գրիգորյանը:

Որոշեցին.- Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 7-րդ ենթակետով՝

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ):

2. Ուժը կորցրած ճանաչել 2003թ. դեկտեմբերի 18-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի ֆակուլտետների դեկանների ընտրությունների ընթացակարգը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3. **Լսեցին.** - ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին (Ձեկ.՝ ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյան):

Գ. Ղազինյանը ներկայացրեց հիմնական այն փոփոխությունները, որոնք տեղ են գտել նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծում: Նշվեց, որ ինչպես այս, այնպես էլ նախորդ նախագծի վերաբերյալ ֆակուլտետներից ժամանակին առաջարկություններ և դիտողություններ չեն կատարվել:

Արտահայտվեցին. – Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ.Լ. Սարգսյանը, սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Ե. Մկրտիչյանը, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Ա. Գրիգորյանը, ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնի տնօրեն Լ.Ա. Շեկյանը:

Որոշեցին.– Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 7-րդ ենթակետով՝

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ):
2. Ուժը կորցրած ճանաչել 2004թ. հունիսի 17-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4. Լսեցին. – Կրեդիտային համակարգի ներդրումը հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայում: Խնդիրներ և լուծումներ: (Զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):

Գ. Գևորգյանը նշեց, որ վերջին ուսումնական տարիներին նկատվում է հեռակա ուսուցմամբ հետազոտողի կրթական ծրագրով սովորողների առաջադիմության աճ: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով նրանց՝ նշված կրթամասով ուսումը մասնագիտական աշխատանքի հետ համատեղումը՝ նպատակահարմար է համարվում հեռակա ուսուցման համակարգում սովորող ասպիրանտների մանկավարժական պրակտիկայի յուրաքանչյուր տարվա կրեդիտները կարելի է փոխարինել այդ տարվա մասնագիտական աշխատանքի վերաբերյալ տեղեկանքով:

Արտահայտվեցին.– ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Ա. Սահակյանը, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Ժ. Դումանյանը:

Որոշեցին.– Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 7-րդ ենթակետով և քննարկելով կրեդիտային համակարգով ասպիրանտուրայում սովորող հեռակա ասպիրանտների առաջադիմությունը՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է՝

1. <<Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում (հետազոտողի պատրաստման կրթական ծրագիր)>> կատարել հետևյալ փոփոխությունները՝ ա. 2.1.3. կետը լրացնել հետևյալ նախադասություններով.

«հեռակա ուսուցման համակարգում սովորող ասպիրանտների մանկավարժական պրակտիկայի յուրաքանչյուր տարվա կրեդիտները կարելի է փոխարինել այդ տարվա մասնագիտական աշխատանքի վերաբերյալ տեղեկանքով:

Առկա ուսուցմամբ ասպիրանտներին թույլատրել մանկավարժական պրակտիկայի 4 կրեդիտը փոխարինել 1 (մեկ) տարվա մասնագիտական աշխատանքի վերաբերյալ տեղեկանքով»:

բ. 2.2.1. կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«հումանիտար մասնագիտություններով ասպիրանտներին թույլատրել փոխարինել այդ տարվա սեմինարների համար նախատեսված 4 կրեդիտը 1 (մեկ) էլույթով գիտաժողովում»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5. **Լսեցին.**- ԵՊՀ գրադարանային ֆոնդի առկայության և օգտագործման վերաբերյալ հաղորդում: (Զեկ.՝ գրադարանի տնօրեն Ե. Ս. Միրզոյան):

Ե. Միրզոյանը ներկայացրեց գրադարանի գրականության քանակն ըստ տեսակների (գրքեր, ամսագրեր, թերթեր և այլն), որն ընդհանուր առմամբ գերազանցում է 2 միլիոնը, էլեկտրոնային ռեսուրսները: Ներկայացվեց գրադարանի ֆոնդն ըստ տեղաբաշխման. գրապահոցներ, ընթերցասրահներ, աբոնեմենտի բաժին և այլն: Առանձին անդրադարձ կատարվեց հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության բաժնի գրքերին: Նշվեցին համալսարանի գրադարանի ֆոնդի համալրման աղբյուրները (տարեկան համալրումը՝ 20 հազար): Խոսելով գրադարանի բաժինների պայմանների մասին՝ Ե. Միրզոյանը առանձնապես կարևորեց գրապահոցների պայմանների բարելավման անհրաժեշտությունը:

Արտահայտվեցին.- Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Լ. Վարդանյանը, հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ա. Ավագյանը:

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

Լսեցին.- Ընթացիկ հարցեր

Ըստ 1-ին հայտի ԵՊՀ դիմորդների շարժի մասին (Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Միմոնյան): Ռեկտոր Ա. Միմոնյանը գոհունակություն հայտնեց համալսարանի աշխատակիցների՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների որակից՝ նշելով, որ 2012թ. մայիսի 30-ի դրությամբ 1-ին հայտով ԵՊՀ դիմորդների թիվը կազմում է 5261, որը մոտ 10 տոկոսով գերազանցում է 2010թ. ցուցանիշը (4805): Միևնույն ժամանակ ռեկտորը մտահոգություն հայտնեց բնագիտական մասնագիտությունների հանդեպ հետաքրքրության ցածր մակարդակի վերաբերյալ:

Արտահայտվեցին.- պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը, մինչհամալսարանական կրթության վարչության պետ Վ. Ս. Գալստյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանը:

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

13.06.2012թ.